

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՆԱՐԻՍ

Տարեկան 12 ժո.
Վերականգն. 6 ժո.

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ


Երկու քիւր մէկ ծաւառով
Տարեկան 14 ժո.
Վերականգն. 7 ժո.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար
Վերականգն. 1.50

ԿԱՆԵԻԿ

Մա՛րոցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԿԱՆ

ԱՅԿԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ՍՄԵՆ ՉՈՐԵՔԱԲԹԻ Ի ԴԱԲԱԹ

ԱՍՅԵ

Réaction du Journal

«Iraounk»

VAKNA (իւլյուս)

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ираунок»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
րոշիր

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Անգլ. Ապագայագրական Գիտությունների
Գործակալ Վարդանան Ե. Սամուէլի
Եւ Այգլերթ Պ. Սամուէլի գրասենեակի-
ները փոխադրուած են Պանք Պալատ-
ների նստակի տեղը. փողոց Սօֆիսթա
Կ. Կ. Փափագեանի վաճառատան դի-
մաց: 2-1
Վառնա 1 Յունվար

ՆՈՐ ԹԵԼԱԴՐԱՆԵՐ

Հայ յեղափոխական գործու-
նեութեան մասին նոր թելադ-
րանք մը սկսած է շատ մը կող-
մերէ արձագանք գտնել: այն է
թերահայ դատին պաշտպանու-
թեան համար կազմուած մար-
մինները պէտք է միայն թուր-
քիոյ մէջ մնան և հոն գործեն,
այսինքն կեդրոն, Պիւսո եւայլն
հոն պէտք է ըլլան ու կողկասը
և ամբողջ արտասահմանը մաք-
րուի սիրող յեղափոխականներէ,
աւելի ճիշդ յեղափոխութեան ա-
նունով շահատակողներէ:

Այս թելադրանքը որ հետզհե-
տէ պահանջի կերպարանք կըս-
տանայ, արդար է ըստինքեան,
թէեւ թելադրողներէն կամ պա-
հանջողներէն շատերը յետին
մտքեր ունեցած ըլլան:

Այս միջոցիս կողկասը միաձայն
կերպով Կաշակցականներու ե-
րեսին կը պաշտայ զգուշ, մեր
երկրէն դուրս ելէ՛ք ու ծածկա-
հայաստան գացէ՛ք ձեր գերը
կատարելու: Նոյնը կաղաղակեն
արտասահմանէ՛ շատ մը հայեր,
որոնց մէկ մասը ձանձրացած ու
զգուշ, յեղափոխութեան ա-
նունով իրենց աչքերուն առջեւ
գործուած զեղծումներէն, բռնու-
թիւններէն և ոճիրներէն, զա-
նոնք հեռացնելու համար
«Ծածկահայաստան գացէ՛ք» ըսե-
լէ զատ ուրիշ ճար չը տեսնու-
ուրիշ մաս մը բուն գործին հա-
մար օգտակար կը տեսնէ յեղա-
փոխութեան վարիչներուն, ի-
րենց կեդրոններով ու պիւսո-
ներով, մայր երկրին մէջ գըտ-
նուիլը:

Մենք այս վերջիններու կար-
ծիքին բոլորովին համոզուած
չենք: Այս, կընդունինք թէ բուն
գործիչը երկրին մէջ պէտք է
ըլլայ, հաւաքուած ուժերը երկ-
րին մէջ պէտք է օգտակարապէս
գործածուին ու ծախսուին և ոչ
թէ արտասահմանի մէջ այս ու
այն սիրող յեղափոխականը կե-
րակրելու և կուսակցական բո-
բական ընելու մտքներ, բայց
վերահսկողութիւնը, գործունէու-
թեանց և հաշիւներու քննու-
թիւնը, կը կարծենք թէ, առանց
արտասահմանի ազատ մթնոլոր-
տին մէջ գալու կամ առանց ար-
տասահմանի մասնակցութեան չէ
կարելի անկաշկանդ ու անվերա-
պահ կերպով կատարել: Կը կար-
ծենք թէ՛ առանց ազատ արտա-
սահմանցիկ հսկողութեանը՝ երկ-
րին մէջ եղբայրասպանութիւն-
ները ու զեղծումները աւելի յա-
ճախակի կը պատահին, զեղծա-
րարները և ոճրագործները
միեւնոյն անխղճութեամբ թուր-
քին ու քրեարտի աշակցութեանը
պիտի ապաւինին նեղը մնացած
ատեններն և վտանգեն թէ գոր-
ծը և թէ գործիչները: աւելին
կայ, թուրք կառավարութիւնը
ինքը պիտի շահագործէ հայ յե-
ղափոխութիւնը, ինչպէս 1896ին
Նազըմ փաշա Պոսոյ մէջ կընէր,
հայ հարուստներէ Հնչակեան կը-
նիքով դրամ հաւաքել տալով:

Վերջապէս, ընդունելով որ յե-
ղափոխական գործիչը եւ գործը
երկրին մէջ պէտք է ըլլան, բայց
վերին հսկողութեան և հաշուա-
ռութեան գործին մէջ արտա-
սահմանի մասնակցութիւնը ան-
հրաժեշտ կը գտնենք, մանաւանդ
թէ արտաքին քաղաքական ան-
ցողարձեքներու երկրի գործիչնե-
րը հաղորդ պահելու և հայ շար-
ժումին քաղաքական ուղղու-
թիւնը ճշգրիտ ու դիմումները ը-
նելու կարեւոր գերը արտասահ-
մանի հայ հայրենասէրը միայն
կրնայ կատարել:

ԺԵՕՆ ԹՈՒՐԲԵՐԸ

Թուրքիոյ արդի վարչական
դրութեան դէմ բողոքող երիտա-
սարգ թուրքերու մէջ էն ան-
կեղծը ու լուսամտը իշխան Սա-
պահէտտինը դուրս եկաւ, քանի
որ այս իշխանադուրն առաջին
թուրքն է թուրքիոյ համար ա-
պակեղբորնացման վարչական դը-
րութիւն հաստատելու սկզբունքը
ընդունող ու իր ազգակիցներուն
յանձնարարող:

Բայց աւելի ստուարաթիւ հե-
տեւորներ ունեցող կեդրոնացման
կողմնակից թուրք կուսակցու-
թիւն մը հետեւեալ առարկու-
թիւնները կը ներկայացնէ իշ-
խան Սապահէտտինի առաջար-
կած ապակեղբորնացման դէմ որ
հայերու ալ հաճելի է և որուն
մենք ալ պէտք է ուժ տանք:
Իսկ մոլեռանդ թուրք կուսակ-
ցութեան մը (թէեւ ժէօն թուրք
կոչուին) այս առարկութիւննե-
րը եւս պէտք է որ ուշադրու-
թեան առնենք, հասկնալու հա-
մար մեր ընդդիմադիրներուն
մտածման ու դատողութեան կեր-
պերը:

Սապահէտտին Էֆէնդիի ծրագրի եւ
նրա բերանացի յայտնութիւնների վրայ
հիմնուելով մեր կուսակցութեան կող-
մից անուամբ հետեւեալ առարկու-
թիւնները:

Ձերգ վսեմութիւնը «ապակեղբոր-
նացման» սխառն ընդունում է իր-
րեւ հիմք բոլոր բարենորոգութիւննե-
րի, եւ այդ սխառն օգուտները ցոյց
տալու նպատակով, իրեւ օրինակ մէջ
է բերում լինելիայի այժմեան վարչա-
կան սխառնը եւ օսմանեան պետու-
թեան մեծութեան շրջանը՝ իրեւ հա-
մագեցուցիչ փաստեր:

Նախ վերցնենք Անգլիայի վարչա-
կան սխառնը:

Անգլիայում, արդարեւ, կայ ապա-
կեղբորնացում, բայց նա չէ գործա-
դրում Անգլիայի ամեն կողմերում:
յետոյ պէտք է ուշադրութեան առնել
ևւ այն՝ թէ նրա գործադրութիւնն ինչ-
պիսի զէպքերի եւ խնդիրների արդիւնք
է: Բացի այդ, ինչպէս կարելի է մեզ
նման զանազան կրօններից ու ցեղերից
բաղկացած մի ազգաբնակչութեան
շրջանում գործադրել մի այնպիսի վար-
չական սխառն, ինչպիսին ընդունում

է անգլիական ազգի պէս մի ազգ՝ որ
քաղաքակրթ ժողովուրդների մէջ ըս-
տեղծել է իր համար մի բացառիկ դիրք
իր ազգային նախանձախնդրութեամբ:
Եթէ, ինչպէս պնդում էք, այդ սխա-
ռնը ամէն ազգի եւ ամէն երկրի հա-
մար օգտակար է, ինչո՞ւ Ֆրանսացի-
ները, որոնք իրանց հզօր ախոյեանի՝
գերմարացիների հասարակական նշա-
նակութիւն ունեցող ամենափոքր գըր-
քերն անգամ թարգմանում են նախ
քան նրա տարագրութեան աւարտելը
եւ որոնք միշտ հետեւում են նրանց
յառաջդիմութեանն ու գտած յաղորու-
թեանը, ինչո՞ւ Ֆրանսացիները նկատի
չեն առնում այդ մեծ օգտակարութիւն
ներկայացնող սխառնը, ինչո՞ւ իրանց
երկրում չեն գործադրում «ապակեղբոր-
նացումը»:

Երկրորդ. այժմ վերցնենք օսման-
եան պետութեան մեծ շրջանը: Ձերգ
վսեմութիւնն ասում է. «Մինչեւ այն
ժամանակ, երբ դեռ եւս օսմանեան
պետութեան մէջ իշխող էր հանգիստ-
նում ապակեղբորնացումը, պետու-
թիւնն իր մեծութեան զագաթնակէ-
տին էր հասել, բայց այն օրից, երբ
թողեցին այդ սխառնը, պետութիւնը
մատնվեց քայքայման»: Իսկ մենք, ոչ
այդպէս չենք կարծում: Բնենք խըն-
դիրը:

Օսմանեան պետութեան հիմնարկու-
թեան սկիզբից մինչեւ Սուլթան Մահ-
մուդ Բ. վարչական սխառնը մօտառո-
րապէս «ապակեղբորնացումն» էր, իսկ
կենարոնացման սխառնը սկսուել Սուլ-
թան Աբդուլ Ազիզի ու Աբդուլ Հա-
միդի շրջանները: Արդ, թէ՛ մեծու-
թեան եւ թէ քայքայման շրջաններում
տիրում էր միեւնոյն սխառնը: Հետե-
ւաբար բանաւոր ու խելացի չէր լինի
այդ մեծութիւնը կամ քայքայումը կա-
պել ոչ թէ վարչական սխառնի, կենտ-
րոնացման կամ ապակեղբորնացման,
այլ ուշադրութեան արժանի ներքին
ու արտաքին բազմաթիւ պատճառների
հետ: Կենտրոնացման այն սխառնը, որ
ընդունում է ինքնավարութիւնը եւ
որը տալիս է մեզ մեր Սահմանադրու-
թիւնը, ամենից աւելի ընդունուած
սխառնն է բազմաթիւ երկրներում եւ
մանաւանդ մեր զանազան ցեղեր պա-
րունակող երկրի համար:

Այդ կարծիքին է այստեղ (եզիստոս)
գտնուող մեր հայրենակիցների մեծա-
մասնութիւնը եւ դուք երկրի ներսում
էլ չէք գտնի մեր երկրի ընդհանուր
հասարակական երեւոյթներին տեղեակ
մի օսմանցի, որ չյարի այդ ուղղու-
թեան: Լայն ապակեղբորնացման սխա-
ռնը կարող է վերաբերուել յայնքի,
հայերի, արաբների ու արեւմտեաների
այն մասը, որ բացի օսմանցիութիւնից

բաժնուհիւրաց, ուրիշ ոչինչ չի մտածուած իրայց դա չէ ընդունում ուրիշ որ եւ է օսմանցի, որ ցանկանում է ընդհանուր հայրենիքի փրկութիւնը:

Ահա մեր որոշումը առաջին յօդուածի մասին: «Այդ յօդուածը գրուած է անորոշ եւ լաւ չէ հասկացուած. չէ գծում ապակենտրոնացման սխալէմի սահմանները, չէ ցոյց տալիս թէ ո՞վ լինի պիտի ուղղէ: Սահմանադրութեան այն տրամադրութիւնները որոնք կարօտ են փոփոխութիւններ: Այն ապակենտրոնացումը որ դուք պահանջում էք, մենք գտնում ենք մեր երկրի համար միանգամայն վնասակար. 1876ի Սահմանադրութեան ընդգրկած ապակենտրոնացումից աւելի լայն ինքնավարութիւն չէ կարող ընդունելի համարուել: Սահմանադրութեան մի քանի տրամադրութիւնները կարող են ուղղուել, բայց այդ իրաւունքը վերապահուած է միայն Ընդհանուր Ժողովին, որ պիտի կազմեն Կ. Պոլսում, ներկայացուցչական ժողովը (մէջլիսը մէրուսան) եւ սենատը (մէջլիսը այան) միասին»:

Ամենէն աւելի քննադատութեան արժանի կէտը ծրարի երկրորդ յօդուածն է: Ահա այդ յօդուածն է, որ մեզ զգուշ է տալիս «ապակենտրոնացում» բառի ամբողջ ոյժը: Յիշեալ յօդուածի այն մասը, ուր ասուած է, թէ «գաղտնի քուէարկութեամբ ընտրուած անդամները եւ սրբազն ընկերակցող մշտական փոխանդամները կազմուած մի ժողով՝ կատարեալ եւ լայն իրաւասութիւն պիտի ունենայ մշակելու եւ որոշելու նահանգի համար օրէնքներ ու կարգապահութեան կանոններ»: Այդ ժողովին է թողնուած նահանգի կենսական գործերի, ինչպէս ելեւմտական, օրէնսդրական եւ կարգապահական հարցերի կարգադրութիւնը: Եւ այս անկախ ժողովում, ասուած է, տեղացի հինգ անդամի դիմաց կենտրոնից միայն մի անդամ պիտի գտնուի: Դա նշանակուած է որ նահանգի վարչական գործերն ու խնդիրները թողնուած են ամբողջովին միայն տեղացիների հայեցողութեանը եւ նրանց իրաւասութեանը: Արդեօք որոնք են լինելու այն տեղացի անդամները, որոնց կատարեալ իրաւասութեանն է թողնուած մի ամբողջ նահանգ: Ի՞նչ պիտի անենք, եթէ այդ անդամները ենթարկուած լին

են Արարիայում անգլիացիներին, Սուրիայում ֆրանսացիներին, Ալբանիայում իտալացիներին եւ աւստրիացիներին, Վեց նահանգներում, Եւրոպական կոմիտաչիներին, կղզիներում՝ Յունաստանի, Մակեդոնիայում Բուլղարներին... եւ այլն ազդեցութեան, մի խօսքով այնպիսի անձանց ձեռքում, որոնք իրանց նպատակով իրանց գործածած զէնքերով՝ ողմբերով եւ իրանց օրդոններով լրագրիներով ու քօչիւրներով՝ արեւի պէս պարզ երեւում փայլում են:

Մի՞թէ կարելի է կարծել որ մեծամասնութիւնը կազմող այդ անգամների վճիռներն ու որոշումները պիտի կարողանան համաձայնուել ազգի եւ պետութեան ընդհանուր շահերի եւ երկրի ամբողջութեան երաշխաւորութեան հետ: Եւ Եւրոպական լուծակալով, առաջին որ նրանք ամբողջ սրտով յարած չեն օսմանեան հասարակական մարմերորդ՝ որ տարիներ շարունակ, իրաւացի թէ անիրաւ, թշնամութիւն են անուցանում իրանց սրտերում եւ գիտակցութիւններում զէպի այդ մարմինը, երրորդ՝ որ տգէտ են եւ աշտու, չորրորդ՝ որ ամեն կողմից ներշնչուած են անկախութեան գաղափարներով եւ յոյսերով, նկատի ունենալով այս բոլորը, կարող ենք ասել, որ ձեր ենթադրած, կատարեալ իրաւասութեան տէր ժողովները ուրիշ բանի չպիտի ձգտին, բայց թէ հայրենիքից բաժանուելու քաղաքականութեան: Այսպիսով մենք մեր ձեռքով պատրաստած ենք ինչու մեր հայրենիքի բաժան բաժան լինելու առիթները: Այժմանից կարող ենք երեւակայիլ թէ ի՞նչ դրութեան մէջ պիտի լինի մեր երկրի՝ այդ վարչական սխալէմի գործադրութիւնից յետոյ Ահա «արարներ» մի մասը՝ իրանց համար խալիֆէ ընտրելով «չէրիֆ»ներից կամ «չէյս»ներից մէկին՝ պիտի ձգտի արաբական պետութիւն հիմնել: Ալբանիայի մի քանի տեղերում նահանգական ժողովները՝ եւրոպացիների ձեռքում, գիտակցաբար թէ անգիտակցաբար խաղալիք պիտի դառնան եւ նահանգի բոլոր վարժարաններում բացի ալբաներէնից ուրիշ լեզու չպիտի ընդունեն, Ո՞վ կարող է ապահովել որ նրանք չպիտի պահանջեն, որ բոլոր հասցիները մնան նահանգի համար եւ այդ առիթով չպիտի դրզեն ժողովրդին ապստամբութեան: Միւս կողմից միթէ

կարելի է վստահել որ «կղզիներ» ժողովների անդամները պատճառ բերեն իրանց կրօնակցութիւնն ու ցեղակցութիւնը՝ կրեացի քրիստոնեաների նման չպիտի վճեն միանալ Յունաստանին: Ընդհակառակը շատ քնական է իրերի այդպիսի վախճանը:

Այս պարագային մենք մեր ո՞ր նաւատորմիցով մեր ո՞ր կանոնաւոր բաժակով եւ Եւրոպայի հետ մեր ո՞ր գաշակցութեամբ պիտի կարողանանք արգիլել վերոյիշեալ ապագայ ժողովներին, իրանց որոշումները գործադրել: Զգիտե՛, ինչպէս կարելի է խօսել իրաւասութիւնների, լայն ապակենտրոնացման մասին, երբ հրապարակի վրայ կան վճռական փաստեր, ինչպէս օրինակ կրեւտէն եւ Բուլղարի: Մենք ո՞ւմ հաշնէին պիտի ընդունենք այդ առաւելութիւնները: Ո՞ւմ օգուտը երեւակայական է, ո՞ւմ վնասը իրական, եւ ո՞ւմ պառակտում է ապահովում: Միթէ ուրիշ ոչ ոքի, բայց եթէ մեզ՝ թուրքերիս: Պէտք է համոզուէք որ քարայական գերդաստանից սկսած մինչեւ լետին երկրագործը, գանազան դասակարգերում, չկայ մի անհատ, որ ընդունէր այդ առաւելութիւնները:

Եթէ, ինչպէս ասում էք, Եւրոպան մեզ չէ սիրում, մեծամասնութեան հակառակ միայն փոքրամասնութեան շահերը պաշտպանելու անիրաւութիւնն է գործում եւ այդ նրա համար, որ մենք այդ առաւելութիւնները չենք ընդունում, ապա ուրեմն թող մեզ չը սիրէ: Մեր պարտականութիւնն է ախտաւոր մեր հայրենիքի երջանկութեան ու փրկութեան եւ ոչ թէ ջանալ եւրոպացիների շնորհներին ու համակրանքին արժանանալ:

(Շարունակելի)

ՏՊԱԳՐԻՉ Մ. ԳԱԼՓԱՔԾԵԱՆ

որ ժամանակէ մը ի վեր քաղաքէս հեռացած էք, այս պահուս կրկին վառնա վերադարձած է եւ ըստ առաջնոյն կը շարունակէ իր սպառնական արհեստը:



- Սոստ չեն:
- Է՛յ, ի՞նչու կրնես:
- Սիրտս անանկ կուզէ... ուրիշ կերպով չեմ կրնար ապրիլ այս ապարանքին մէջ:
- Եթէ քի վաշա գոյնը նետեց ու հողւոյն բարկութիւնը պատկերացուց զէմքին վրայ, առաջին անգամն էր որ կեանքի մը աղջկան համարձակութիւնը կը տեսնէր որ անձնապահ Ջիւլիֆին պէս կը յանդգնէր ապարանքին կեանքը նախատել: Բայց չուզեց խտտութեան դիմել: Հետեւաբար խորոտ ձայնը մեղմացնելով, մօտեցաւ Նուրիսէյին, շոյեց անոր յորդ ու գեղեցիկ ծածկերը, ձեռքը բռնեց ու հարցուց.
- Միթէ՞ ապարանքիս չը հաւնեցար:
- Ապարանքի՞դ, բացառանչեց Նուրիսէյ, խռովուած շարժում մը ընելով:
- Այո՛:
- Ի՞մ աչքիս չերեւիր ապարանքդ, երբ...
- Ինչ երբ... ընդհատեց հրամանատարը:
- Երբ բանտարկուած եմ:
- Ո՞վ բանտարկած է քեզ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՐՊԻԱ

Սերպիոյ մէջ խուլ յուզում մը եւ լարուած դրութիւն մը կը տիրէ վերջերս: Ալէքսանար թագաւորը եւ Տրակա թագուհին ըսպաննող շինուորական կուսակցութիւնը գրեթէ անպատիժ մը նացած ըլլալով, նոր գաւադրութիւններու քաջալերութիւն մը եղած եղաւ: Բէթր թագաւորը ահաւելի ոճրի մը շնորհիւ ձեռք ձգած գահուն վրայ երկար բազմելու բաղդը չպիտի ունենայ կը թուի: Իր դէմը գաւադրութեան մը նշանները յայտնուած են, բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցած են:

Վերջապէս սա Սերպեր իրենց ցեղակից թագաւորներէ գոհ չը կրցին մնալ, ոչ Օտրէնովիչ եւ ոչ Գարակէօրիւզիչ գերդաստաններու շառաւիղները կարող եղան խաղաղ զարգացում մը ապահովել իրենց հայրերուն հերոսութեամբ ազատուած Սերպիային: Օպրենովիչներու ընտանեկան անպատուաբեր կեանքը անոնց հանրային կեանքն ալ ազդոտեց, Միլան թագաւորին իր կնոջ նախալիի հետ եւ անոր դէմ վարած արկածալի կեանքը զգուանք միայն աղղած էր: Իսկ իր միակ որդւոյն, Ալէքսանտրի, Տրակայի հետ կենակցութիւնը եւ թագը ու գահը այդ ոչ-ազնուադարմ կնոջ քրմահաճոյքին ենթարկելը անհանդուրժելի ըրաւ զինք իր բոլոր գերդաստանով, որուն հետեւանքը եղաւ արքայապանութեան մեծ ոճիրը:

Այսօր ալ կրկին գահաժառանգի խնդիր մըն է որ Պէլկրատի մէջ մտքերը կը յուզէ: Բէթր թագաւոր իր երկրորդ

- Բռնութիւնը:
- Ձէ... բռնութիւն չը կայ քու վերադ... ազատ ես ամեն օր պարտեղ պտտելու... ազատ ես ուզած բաներդ գնելու: Ես ներքիններուս պատուիրած եմ որ լեզուս կտրէ, տնիջապէս ընեն: Միթէ՞ կը զրկեն քեզ:
- Ներքիններդ ի՞մ ուզածս չեն կրնար տալ... ատիկա ձեր ձեռքն է:
- Ի՞նչ է:
- Ազատութիւնս:
- Պարագ մտածում. ինչպէ՞ս կուզե՞ս որ քու կը չըլլան բոլոր երջանակութիւններդ: Ու՛ր կրնաս երթալ... դուն աղէկ գիտես որ կոտորածի ժամանակը հազիս ազատեցի քեզ: Հայրդ սպաննուած է... մայրդ սպաննուած է... ազգականներդ չըկան: Անանկ չէ՞...
- Իրաւ է... բայց ես կուզեմ առնոց գերեզմանները տեսնել:
- Գերեզման անի՞ն որ...
- Հարկաւ արեւնի հետքը չէ ծածկուած...
- Օ՛հ, ամեն բան ծածկուած է: Հեռքը չէ, յիշատակն տեղում մոռցուելու վրայ է: Միայն թէ՛ Թո՛ղ այդ տղայական մտածումներդ: Ապարանքի՞

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

43

ԱՒՍԶԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԱՒԱԶԻՆ



ՊԱՏԻՈՅ ՊՐԵԺԷ

(Շար. նախորդ թիւէն)

Շէվրի փաշա իր հարեմանցի մեղկ ու դարչելի կեանքին մէջ խորաոգուելով հետզհետէ մոռցած էր Նառէղարի դառն յիշատակը: Չէր քննարկում իր անուշ երգերով, Ասորի ազգիկն ալ իր վառաշոտ ու խորամանկ միջոցներով եւ կեանքով աղջիկն ալ իր աննման գեղեցկութեամբ անոր մոռցնելու ամուսն էին անցեալը: Կեանքաւոր օտարականութիւնը գատարած էր խուզարկութիւններ շարունակել:

Շէվրի փաշա կը նմանէր սրտէն վրաւորուած գաղանի մը: Քանի որ վէրքէն արիւն կերթար, չէր կարող

հանգստանալ: Բայց երբ վէրքէն արիւնը դադրեցաւ, ան ատեն ամեն բան մոռցաւ:

Իրիկուն մը Նուրիսէյի սենեակը մտաւ: Մանկամարդ աղջիկը բազմոցին մէկ անկիւնը քաշուած կը քնանար:

Պահ մը կեցաւ... գորովանքով մը թշուառ աղջկան դէմքը դիտեց ու յետոյ ձայնեց.

- Կեանքիդ աղջի՛կ...:
- Նուրիսէյ աչքը բացաւ ու բոլոր մարմնով սարսուաց. անցորդի մը պէս՝ որ իր ոտքերուն ներքեւ սեւ օձ մը կը տեսնէ:
- Կը քնանայի՞ր, հարցուց Շէվրի փաշա ժպտելով:
- Նստած է՛ր... քունս տարաւ... մրմնջեց մանկամարդ աղջիկը կից կրտուր ձայնով մը:
- Ինչպէ՞ս... ալ չես մտածեր անոնկ բաներու վրայ, ա՛:
- Ի՞նչ բաներու վրայ:
- Ի՞նչ գիտնամ... ներքիններս կըսեն թէ խենթ եւ խելար խօսքեր խօսքեր կընես եղբի: ամեն ատեն կուլաւ... պտտել չես ուզեր, առանձին կը մնաս Սու՛ւս եւ:

որդին գահաժառանգ հռչակել
կը ցանկայ: Բայց նոյնիսկ թա-
գաւորին կուսակիցները կը հա-
կառակին այդ ցանկութեան, իսկ
հակառակ կուսակցութիւնները
արդէն դժգոհ են թագաւորէն
ալ, անոր որդիէն ալ և կուգն
թագաւորակոն երկու ընտանիք-
ներն ալ երկրէն հեռացնել: Այս
պարագային կը խորհին խնա-
մակալ նախարարութիւն մը
հաստատել, որ յայտարարութիւն
մը զրկէ բոլոր պետութիւններ-
ուն թէ՛ թագաւորական երկու
ներս ընտանիքներն ալ Սեր-
պիան կառավարելու անկարողու-
թիւն ցոյց տուած և տնտեսա-
կան ու քաղաքական զարգացման
պահանջներուն անհամապատաս-
խան ընթացքի հետեւած են: Ուս-
տի սերպ ազգը կը խնդրէ մեծ
պետութիւններէն որբարեացակա
մութիւնը ունենան նոր թագա-
ւոր մը նշանակելու:

Սերպերուն այս ձգտումները
Եւրոպայի արքայական ընտանիք-
ներուն շատ անհաճոյ կը թուի:
ասոնք վեհապետութիւնը՝ զոր
նուիրական պէտքէն նկատելի գը-
ռեհիկ ժողովուրդի մը ձեռք
խաղալիք եղած կը համարեն: և
հաւանականաբար ճիշտ այս նկա-
տումով Անգլիոյ էտուարդ թա-
գաւորը իր ցեղէն ոչ մէկ իշխա-
նազուն Սերպերուն չը տալ վրճ-
ուեր է: նոյնպէս ալ Վիկտորի
կայսրը:

Կարծիք մըն ալ կայ թէ՛ սեր-
պերը երբ յաջողին Բէթր թա-
գաւորը իր ընտանիքով երկրէն
դուրս հանել, մտադիր են հա-
րապետութիւն հրատարակել Վի-
գէն ամենակարճ ճամբան այդ է-
միայն թէ պէտք է գիտնալ թէ
Սերպերը ունին հանրապետա-
կան կառավարութիւն մը վարե-
լու զարգացումը ու հարկաւոր
գիտակցութիւնը:

մէջ բան մը չը պակսիր քեզի համար:
Մասնաւոր ունիս, սպասուհի ունիս,
Ներքինիք ունիս: Եւ եթէ խոստանա
որ ատանկ ոչինչ քաներու վնայ մտա-
ծելով օր պիտի չանցանես, կը պատ-
ուիրիս ներքինի: Փուստ պէյնի որ
քեզ կ'ստանայ պատգնէ՛, կը փափաքե՛ս:
Նուրիմ մէկէն իմէկ չը կ'ըջաւ
պատասխանել: Գաղափար մը, փայլա-
կի մը արագութեամբ, իր գանկին
տակէն անցաւ ու ցնցեց գինքը: Վայ-
կեան մը իր մեծ ու աղւոր աչքերը
զէմ գանուռը գազանին վրայ պատգուց
ու մըմնջեց:

— Այո՛, կը փափաքեմ:
— Խիստ լաւ, ուրեմն ինչու չէիր
յայտնել, նկատել տուաւ հրամանատա-
րը՝ ներքինի գոհունակութիւն մը զգա-
լով:

— Ո՛հ, չէի համարձակել: որովհետեւ
գիտէի թէ արգիլած էիք ապարանքէս
դուրս ելնելու:

— Արգիլուած է՝ անոնց համար որ
յիմարութիւններ կընեն: Քանի որ կը
խոստանաս երջանկութիւնը վայելելու
ի՞նչու զրկեմ քեզ:

Շէվիք փաշա՝ քիչ մըն ալ նստելէն
ետքը, մինակ թողուց Նուրիմէն ու

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն բնակող Գալուստ
Կիւլպէնկեան յաջողեց է 5-6
անգլիացի միլիոնատէրերու հետ
պանքա մը կազմել Լոնտոնի և
Բարիզի մէջ գործելու համար:
Բարիզի ճիւղին բ. տնօրէն կար-
գուած է Բ. Էստեան:

— Երեւանի նահանգին մէջ
հայերու օրթոթօքութիւնը քա-
րողով ուսման միջոցառութիւնը
կազմաւորուեցաւ Ռուսիոյ սի-
նոդին որոշմամբ:

— Պուգրէշի հոգաբարձութեան
առաջարկութեամբ Պոլսոյ պատ-
րիարքը օրհնութեան կոնգակ-
ներ զրկեց Մերակուտական Տ.
Գրիգոր Թե Կոյլալի, Տէր Յարութի-
թիւնի, Տ. Փ. Ֆէրհատեանի և Տ.
Մանուէլ Միրախօրեանի, ի վար-
ձաւորութիւն Պուգրէշի ցուցա-
հանգէսին մէջ հայ եկեղեցիին
ներկայացուցած ըլլալուն:

— Վատիկանի պալատին մէջ
գեկտ, 4ին գումարուած կարաի-
նայնիս ժողովին ներկայաց-
ուած են Միթիար Աբբայի գը-
րութիւնները, որոնք Աստուծոյ
հոգով լեցուած անձի մը գոր-
ծերը ճանչցուելէ ու քննուելէ
յետոյ մեր Միթիար Աբբան սր-
բոյ կարգը դասելու որոշումը
պիտի տնուի եղեր:

— Կովկասի մեծահռչակ Ար-
ղութեան իշխանները իրենց սե-
փակտութիւնը եղող Սանահին
կալուածներուն մէջ վարժարան
մը պիտի բանան «Արղութեան-
ներու դպրոց» անունով: որուն
ծախքը իրենք պիտի հոգան: Սօ-
ֆիա Վասիլէվնա Արղութեան
այս միտքը յղացողը ըլլալով ո-
րոշած է յատկացնել իր Սանահ-
նի կալուածները, իսկ իշխան
Պօրիս Նիքոլայէվիչ Արղու-

թեան մեծ գումար մը տալ խոս-
տացեր է: Սանահին հայ հաս-
րակութիւնը այս գովելի գիտա-
ւորութիւնը լսելով պատրաստա-
կանութիւն յայտնած է չէնքին
պէտք եղած քարը և փայտը ձրի
մատակարարել: Վարժարանի շի-
նութիւնը յառաջիկայ գարնան
պիտի սկսի եղեր:

— Տեղւոյս ազգ. վարժարանի
աշակերտները երկու օրէ իվեր
վարժարան կերթան և անմիջա-
պէս ետ կը դառնան վառարան-
ները վառած չ'ըլլալուն պատ-
ճաւ: Վարժարանին սպասաւորը՝
որ միւսնոյն ատեն ժամակոչ ալ է,
40 ֆր. աննշան ամսականին վը-
րայ յաւելում մ'ընել տալ չը
յաջողելէ վատ, Տ. Մարտիրոսին
հետ միւսնոցին տունը պատելու
առաջարկին ալ մերժում ստացեր
է յիշեալ տէրտէրին, որ փոխա-
նակ ազգին սպասաւորը շահե-
ցնելու դրամի ոիրոյն համար իր
թուր կը պտըտցնէ հետը: Ահա
այս կրկին պանծառներով ժա-
մակոչը գործադուլ ըրած է և
վառարանները չը վառուելով ա-
շակերտները վարժարանէ զըր-
կուած են:

— Հ. Յ. Դաշնակցութեան Կով-
կասի օւկան Երկիր օրաթերթը
ուս կառավարութեան կողմէ
դադարման դատապարտուած է:
Բայց նոյն կազմակերպութիւնը
ուրիշ անհատի մը միջոցաւ ար-
տուծութիւն ստացած է ժամանակ
անսնով օրաթերթ մը հրատա-
րակելու:

— Պուրկազի «Արարատ» ըն-
թերցարանի վարչութիւնը կը
խնդրէ մեզմէ ծանուցանել թէ
վիճակահանութիւնը կամքէ ան-
կախ պատճառներով յետաձգուած
է փետր. 1ին:

Մարտէյլի «Արմէնիա»-յի մէջ
կը կարգաւոր հետեւեալը:

ու անոր անձնութեանը կերպով մը
խղճիս կ'պակ:

Մանկամարդ աղջիկը գրէթէ ժամե-
րով մենախօսութիւններ ըրաւ: յետոյ
երկու ձեռքերը կուծքին վրայ ծալլեց
ու մըմնջեց:

— Ո՛հ, տարաբաղդ հայրս... տա-
րաբաղդ հայրս... անա քու վրէժդ ես
պիտի լուծեմ այն գազանէն որ ատիւ-
նըդ խմեց: Կուխտեմ, հայր, կուխտեմ
Աստուծոյ ու խղճիս հանգէպ որ այս
հրէշը չը պիտի թողում արեւ ու կեանք
տեսնէ... այս ապարանքը սեւ գերեզ-
ման մը պիտի ընեմ անոր: Թո՛ղ հայր
ձեռքդ բաց աչքնի անոր արեւնալի
գուրին առջեւէն, թող կարգայ կեա-
վուրի մը աղջկան սա տողերը՝ «Հօրս,
եղբորս, սիրելիներուս ու իմ պատուոյս
վրէժը ներսնէ՛... արեւններու, գար-
շնութեանց ու խաւարի մը մէջ կը տա-
պըլտկի...»

Այսպէս բոլոր գիշերը Նուրիմէ ան-
գուն անցուց: Աստուծոյ իր սենեկին
գուրը զարնուեցաւ կամաց ձայնով մը:
Բացաւ դուռը ու տեսաւ որ եկողը
ձեռքին ձուռաւ պէյն էր:

— Ա՛ն սուկա, Նուրիմէ, մըմնջեց
ձուռաւ պէյն ու թուղթի մը մէջ փաթ-

«Ժան-Կուստէ փողոցի մատու-
ռին մէջ այսօր կէս օրին մա-
տուցուած պատարագը խանգա-
րեցին չորս մարդեր: ազգով հայ
որոնք կը ջանային կողոպտել
թապախներով հանգանակուած
դրամը, Հաւատացեալները բո-
ղոքեցին և ոստիկաններ վրայ
հասնելով ձերբակալեցին զանոնք
ու տարին բանտ:»

Հայ անունը կրող ամեն մարդ
անշուշտ տխրութեամբ պիտի
կարդայ այս տողերը, որոնք պա-
տիւ չեն բերեր մեր ազգային ա-
նունին: Մինչեւ այժմ լսուած
բան չէր որ հայեր եկեղեցիին
մէջ պատարագի միջոցին յար-
ձակին թապախներ իր վրայ, կո-
ղոպտելու համար անոնց մէջ հա-
ւաքուած դրամը: Այս ալ կատար-
ուեցաւ... Միթէ՞ յառաջիմու-
թիւն մը կը համարին աւաղա-
կութիւնը...

ԾԱԽՈՒԻ ԳԻՐԳԵՐ

ՓՐԱՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ Կամ ՄՐՄՈՒՆՔ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԳ անգամ տպագ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ Կը պատկերացնէ Պուրկա-
րեան նիստ ու կացը ու թուրքերէ
կրած տառապանքը անոնց ազատու-
թենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԱՌԷՆԻ Պատկեր
մը Տաճկահայաստանի իրական կեան-
քէն: Չեղջեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել
ՎԱՌՆԱ «Իր աւուս» ի խմբագ-
րութեան

Ա. Զ. Դ.

Քաղաքիս Ս. եկեղեցւոյն համար
կարող ժամակոչի մը գէտք կայ: պայ-
ման է ամուրի ըլլալը: գոհացուցիչ
ա՛սական. փափաքողք ընդ հուպ ներ-
կայանան ի խորհրդարան:

Թուած ծրար մը տուաւ:

Մանկամարդ աղջիկը քակեց ծրարն
ու մէջէն հանեց երկու կտոր եռան-
կիւնի ձեւով գունաւոր թուղթեր:

— Ի՞նչ են ատոնք, Ֆուստ պէյ,
հարցուց Նուրիմէ զարմացական չնչ-
տով մը:

— Հա՛, ատոնք նուսխաններ են, պա-
տասխանեց ձերուներն: Տուր ինձի սխա-
լեցայ ատոնք քեզի համար չնեմ:

— Շատ աղէկ, առէ՛ք ուրեմն:
Ու զանոնք ձերուներն Ֆուստ պէյին
յանձնեց: Ներքինի գլխի շարժում մը
ընելով սենեկէն դուրս ելաւ ու թնք-
նիւրն մըմնջեց:

— Շատ ցնդեր եմ. փոխանակ անոր
քնանալու ժամուն ներս մտնելու եւ
կամաց մը կուրծքին վրայ դնելու:
ձեռքովս իրեն կը յանձնեմ: Ով գիտէ
կարելի է ասանկով թողլալ մնայ գը-
նաց, մէյ մը հարցունելու է ֆաթի-
րին:

(Շարունակելի)

печатница Д. Тодоровъ и С-ие — Варна